# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«04» նոյեմբերի 2025 թվականի №2619-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ 2/5 ՀԱՍՑԵԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 525.85 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Չարենցի փողոցի 2/5 հասցեի հարևանությամբ գտնվող 525.85 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Անի թաղամասի 7-րդ փողոց, 15/6 հողամաս**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

10:52:31 GMT+4
ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«04» նոյեմբերի 2025 **թվականի** N2618-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՓՈՂՈՑ N 42/3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՆԱԽԱՄՈՒՍՔ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՄԲԱՏ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Սմբատ Հակոբյանի լիազորված անձ Մկրտիչ Սեդրաակի Հովսեփյանի դիմումը (մուտքագրված ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում 2025 թվականի հոկտեմբերի 22-ին N 16297 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Սմբատ Հակոբյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Գյումրի քաղաքի Հաղթանակի փողոց N 42/3 հասցեի կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրված 17,12 (տասնյոթ ամբողջ տասներկու) քառակուսի մետր մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի ժամկետը երկարաձգել 5 (հինգ) տարի ժամկետով:
2. Սահմանված կարգով կնքել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2010 թվականի նոյեմբերի 04-ի պայմանագրի (գրանցված սեղանամատյանում 7270) 2-րդ կետի 2.1 ենթակետի փոփոխման վերաբերյալ համաձայնագիր (պատասխանատու՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի գովազդի, առևտի և սպասարկման ոլորտի համակարգման բաժին):
3. Համաձայնագրի նոտարական վավերացման և գույքային իրավունքների պետական վերագրանցման հետ կապված ծախսերը կատարել Սմբատ Հակոբյանի միջոցների հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սմբատ Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

2025-11-04 12:05:00 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
miD

**Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» դեկտեմբերի 2025 **թվականի** N 2617-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԼԱՐԻՍԱ ԼԵՎՈՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ 138,23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրու համայնքապետարանում 2025 թվականի հոկտեմբերի 30-ին կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փողոց N 18/2 հասցեով (ծածկագիր 08-001-0090-0040) – 138,23 (մեկ հարյուր երեսունութ ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Լարիսա Լևոնի Մարտիրոսյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 2840000 (երկու միլիոն ութ հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 02):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փողոց N 18/2 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 138,23 (մեկ հարյուր երեսունութ ամբողջ քսաներեք հարյուրերորդական քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0090-0040) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Լարիսա Լևոնի Մարտիրոսյանին բնակելի տուն կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Լարիսա Լևոնի Մարտիրոսյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Լարիսա Լևոնի Մարտիրոսյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել բնակելի տուն կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Լարիսա Լևոնի Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2025 թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«04» սեպտեմբերի 2025 թվականի №2616-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Ղ. ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ 77/7 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ № 23042025-08-0026) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գոռ Մալխասյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №16642-2025 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Ղ. Աղայան փողոց 77/7 հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական № 23042025-08-0026) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) **5017.01** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ղ. Աղայան փողոց, 77/7 արտադրամաս**

2) **166.45** քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ղ. Աղայան փողոց, 77/1 հողամաս**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

mID

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«03» Սեպտեմբերի 2025 **թվականի** N 2615 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ 13-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 17.49 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 17.49 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՍՏԻՃԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Անի թաղամասի 13-րդ փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 17.49 (տասնյոթ ամբողջ քառասունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 17.49 (տասնյոթ ամբողջ քառասունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով աստիճանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N01092025-08-0007 վկայականը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Անի թաղամասի 13-րդ փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 17.49 (տասնյոթ ամբողջ քառասունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 17.49 (տասնյոթ ամբողջ քառասունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով աստիճանը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Էմմանուել Ավետիքի Օհանյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«03» Նոյեմբերի 2025 թվականի № 2614-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՇԱՌԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ 1/3Ա ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2454263) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Մանուկյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №16162-2025 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Շառլի հրապարակ 1/3ա հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2454263) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Շ. Ազնավուրի հրապարակ, 1/5 շինություն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«03» սեպտեմբերի 2025 թվականի № 2613-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 11993.35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0083-0001-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մարմաշենի խճուղու հարևանությամբ գտնվող 11993.35 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0083-0001-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մարմաշենի խճուղի, 15/1 հողամաս**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«03» Սեպտեմբերի 2025 թվականի №2612-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 2-ՐԴ ՇԱՐՔ 12 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0341-0042) ԵՐԵՔ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Զոյա Թորոսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №16145-2025 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության բաժանման սխեմաները և հատակագծերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Կ. Դեմիրճյան փողոց 1-ին փակուղի 2-րդ շարք 12 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (կադաստրային ծածկագիր 08-001-0341-0042) երեք մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) **195.3** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝
**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Դեմիրճյան փողոց, 1-ին շարք, 1 բնակելի տուն**
2) **191.9** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝
**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Դեմիրճյան փողոց, 1-ին փակուղի, 4 բնակելի տուն**
3) **139.3** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝
**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Դեմիրճյան փողոց, 1-ին փակուղի, 6 բնակելի տուն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

2025.09.03 16:45:21 GMT+4
Հաստատված է ԷԿՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» Նոյեմբերի 2025 թվականի №2611Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԱՇՈՑՔ ԹԱՂԱՄԱՍ 6-3 ՇԵՆՔ N16 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ 66.82 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, շինությունների հատակագիծը ու բնութագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Աշոցք թաղամաս 6-3 շենք N16 բնակարան հասցեագրությամբ 66.82 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով համայնքապատկան անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մարմաշենի խճուղի, 22/1 շենք, 16 բնակարան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*«03» նոյեմբերի 2025 թվականի N2610-Ա*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ N65/8 ՀԱՍՑԵԻ 11.92 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 23.84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՊԱՏԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N65/8 հասցեի 11.92 (տասնմեկ ամբողջ իննսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասի վրա ինքնակամ կառուցված է 23.84(քսաներեք ամբողջ ութսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով առեվտրի եվ սպասարկման օբյեկտի պատ (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N08062012-08-0075 վկայական) որը տիրապետում և օգտագործում են քաղաքացիներ Զարե Հովհաննեսի, Ցոլակ Հովհաննեսի, Արմեն Հովհաննեսի Գևորգյանները :

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով. համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N65/8 հասցեի 11.92 (տասնմեկ ամբողջ իննսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասի վրա ինքնակամ կառուցված 23.84(քսաներեք ամբողջ ութսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով առեվտրի եվ սպասարկման օբյեկտի պատը ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Զարե Հովհաննեսի, Ցոլակ Հովհաննեսի, Արմեն Հովհաննեսի Գևորգյաններին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 03-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N65/8 հասցեի 11.92 քառակուսի մետր մակերեսով հողամասը, 23.84 քառակուսի մետր մակերեսով առևտրի և սպասարկման օբյեկտի պատը քաղաքացիներ Զարե Գրիգորյանին, Ցոլակ Գրիգորյանին, Արմեն Գրիգորյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին >> թիվ 1296-Ա որոշումը:
6. Լուծել անշարժ գույքի առուվաճառքի 2025 թվականի օգոստոսի 12-ի N1296 պայմանագիրը:

2025-11-03 15:50:04 GMT+4
Հաստատված է ԷՍԷՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» Նոյեմբերի 2025 թվականի №2609-Ա

**ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՔՐԻՍՏԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ, 8Ա ՇԵՆՔ, 48 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 51.78 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Քրիստինե Առաքելյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №15739-2025 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Նվիրատվության պայմանագրով քաղաքացի Քրիստինե Առաքելյանին պատկանող Գյումրի քաղաք, Կ. Դեմիրճյան փողոց, 8ա շենք, 48 բնակարան հասցեում գտնվող 51.78 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Դեմիրճյան փողոց, 8ա շենք, 48/1 բնակարան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-0(
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» նոյեմբերի 2025 **թվականի** N 2608-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 660-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 07-Ի N 1967-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 07-ի N 1967-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 27 մայիսի 2025 թվականի N Կ-27052025-08-0191 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 07-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հ.Սարգսյան փողոցի հարևանությամբ գտնվող 134,22 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա 242,15 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Արտուշ Լյուդվիգի Մաթևոսյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 1967-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) վերնագրում, որոշման 1-ին կետում <<242,15(երկու հարյուր քառասուներկու ամբողջ տասնհինգ հարյուրերորդական)>> թիվն ու բառերը փոխարինել <<171,55(մեկ հարյուր յոթանասունմեկ ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական)>> թվով և բառերով:

2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 07-ի N 1967-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 660-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2025-11-03 14:28:54 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«03» Սեպտեմբերի 2025 **թվականի** N 2607-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 2247-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 06-ի N 2247-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 20 նոյեմբերի 2023 թվականի N Կ-20112023-08-0172 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 06-ի <<Քաղաքացի Կարապետ Ոսկանի Բեգիկյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոցի N 37 հասցեի տան կառուցապատման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 82,44 քառակուսի մետր մակերեսով հողամասի, նրա վրա առկա շինության և սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված 77,71 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները, 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված 46,44 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունները, ինքնակամ փակված 1 դուռը, ինքնակամ բացված 2 դուռը, ինքնակամ բացված 1 պատուհանը և 1 բացվածքը օրինական ճանաչելու մասին>> N 2247-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<82,44(ութսուներկու ամբողջ քառասունչորս հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<83,2(ութսուներեք ամբողջ երկու տասնորդական)>> թվով և բառերով.

2) վերնագրում, նախաբանում, որոշման 2-րդ կետում <<46,44 (քառասունվեց ամբողջ քառասունչորս հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<35,5(երեսունհինգ ամբողջ հինգ տասնորդական)>> թվով և բառերով.

3) որոշման 2-րդ կետում <<140174(մեկ հարյուր քառասուն հազար մեկ հարյուր յոթանասունչորս)>> թիվը և բառերը փոխարինել <<110363(մեկ հարյուր տասը հազար երեք հարյուր քսանհինգ)>> թվով և բառերով:

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2025 **թվականի** N 2606-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Դ. ՖՈՒՐՄԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ N 5/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 47 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (34.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ 47 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՅԿ ԻԼՅԱՅԻ ԱՄԱԼՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Դ. Ֆուրմանովի փողոց 3-րդ նրբանցք N 5/1 հասցեի 47(քառասունյոթ) քառակուսի մետր մակերեսով հողամասով օժանդակ շինությունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 2206025-08-0001 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 16-ի N 103-Ա որոշումը, քաղաքացի՝ Հայկ Ամալյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 9-ին N 221 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Դ. Ֆուրմանովի փողոց 3-րդ նրբանցք N 5/1 հասցեի 47(քառասունյոթ) քառակուսի մետր արտաքին (34.8(երեսունչորս ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 301364 (երեք հարյուր մեկ հազար երեք հարյուր վաթսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով օժանդակ շինությունը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Հայկ Իլյայի Ամալյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Դ. Ֆուրմանովի փողոց 3-րդ նրբանցք N 5/1 հասցեի 47(քառասունյոթ) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 16177 (տասվեց հազար մեկ հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 760319 (յոթ հարյուր վաթսուն հազար երեք հարյուր տասնինը) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Հայկ Իլյայի Ամալյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Հայկ Իլյայի Ամալյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հայկ Իլյայի Ամալյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Հայկ Իլյայի Ամալյանի միջոցների հաշվին:

2025-11-03 16:48:06 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2025 թվականի N 2605-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 2395-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 13-ի « Քաղաքացի Ժաննետա Վալդեմարի Աղանյանին պատկանող Գյումրի քաղաքի Շահումյան փողոց № 20 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 55.66 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 37.87 քառակուսի մետր մակերեսով հողամասի եվ նրա վրա առկա շինությունների կարգավիճակի մասին>> N 2395-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 13-ի « Քաղաքացի Ժաննետա Վալդեմարի Աղանյանին պատկանող Գյումրի քաղաքի Շահումյան փողոց № 20 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 55.66 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 37.87 քառակուսի մետր մակերեսով հողամասի եվ նրա վրա առկա շինությունների կարգավիճակի մասին>> N 2395-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) Վերնագրում «շինությունը» բառից հետո լրացնել «,ինքնակամ փակված 1 (մեկ) պատուհանը» թվերով և բառերով:
2) Նախաբանում «բնակելի շինություններ» բառերից հետո լրացնել «և ինքնակամ փակվել է 1 (մեկ) պատուհան» թվերով և բառերով, «22.1 կետի» թվերից և բառերից հետո լրացնել « և 18-րդ կետի դ) ենթակետի» թվերով և բառերով:
3) Որոշման 1-ին կետում «շինությունը» բառից հետո լրացնել «և ինքնակամ փակված 1(մեկ) պատուհանը» թվերով և բառերով, «ճանաչել օրինական» բառերից հետո լրացնել «տեղական բյուջե ենթակա է գանձման 2725 (երկու հազար յոթ հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:» թվերով և բառերով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» Սեպտեմբերի 2025 թվականի N 2604-Ա

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-ԻՆ ՏՐՎԱԾ N126/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լուսինե Խաչատրյանին Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փող. N2/22 հասցեում բնակելի տան ( ընդ. մակ.- 119.0 քառ.մ; երկրորդ կատեգորիա) և պարսպի (կառ. մակ.- 17.2քառ.մ), նոր կառուցման աշխատանքների կատարման համար 2023 թվականի հուլիսի 6-ին տրվել է N126/23 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. 2023 թվականի հուլիսի 6-ին տրված N126/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2025 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**«03» Սեպտեմբերի 2025 թվականի N 2603-Ա**

## 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-ԻՆ ՏՐՎԱԾ N131/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արտաշես Հովհաննիսյանին Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փող. N2/29 հասցեում բնակելի տան ( ընդ. մակ.- 119.0 քառ.մ; երկրորդ կատեգորիա) և պարսպի (կառ. մակ.- 17.2քառ.մ), նոր կառուցման աշխատանքների կատարման համար 2023 թվականի հուլիսի 6-ին տրվել է N131/23 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. 2023 թվականի հուլիսի 6-ին տրված N131/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**ՈՐՈՇՈՒՄ**

**«03» Սեպտեմբերի 2025 թվականի N 2602-Ա**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-ԻՆ ՏՐՎԱԾ N129/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հրաչյա Մկրտումյանին Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փող. N2/25 հասցեում բնակելի տան ( ընդ. մակ.- 119.0 քառ.մ; երկրորդ կատեգորիա) և պարսպի (կառ. մակ.- 17.2քառ.մ), նոր կառուցման աշխատանքների կատարման համար 2023 թվականի հուլիսի 6-ին տրվել է N129/23 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. 2023 թվականի հուլիսի 6-ին տրված N129/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

3

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<03>> նոյեմբերի 2025 թվականի N 2601-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀՈՎԻԿ ԿԱՐՈՅԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ Հենրիկ Արամի Գասպարյանի լիազորությունները կասեցված համարելու մասին >> N 2559-Ա որոշումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ Հենրիկ Արամի Գասպարյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել գլխավոր ճարտարապետի օգնական Հովիկ Կարոյի Ղազարյանին՝ 2025 թվականի նոյեմբերի 4-ից:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովիկ Կարոյի Ղազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ 2025-11-03 11:43:35 GMT+4 Հաստատված է ԷՍՏՆԳ-ի կողմից mID Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<03>> նոյեմբերի 2025 թվականի N 2600-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՀՐԱՉԻ ՉԱԴՐՅԱՆԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարի 2025 թվականի հոկտեմբերի 2-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Կարապետի Ավետիսյանին ամենամյա նվազագույն արձակուրդ տրամադրելու մասին >> N 749-Ա հրամանը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Հրաչի Չադրյանին ազատել աշխատակազմի տրանսպորտի բաժնի պետի ծառայողական պարտականությունների կատարումից՝ 2025 թվականի նոյեմբերի 4-ից:

**2.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի ( այսուհետ՝ բաժին ) պետի ծառայողական պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Կարապետի Ավետիսյանին՝ 2025 թվականի նոյեմբերի 4-ից:

**3**. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անդրանիկ Հրաչի Չաղրյանին և Գագիկ Կարապետի Ավետիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

2025-11-03 11:48:10 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**ք.Գյումրի**

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**
**Շ Ի Ր Ա Կ Ի  Մ Ա Ր Զ**
**Գ Յ Ո Ւ Մ Ր Ի  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ղ Ե Կ Ա Վ Ա Ր**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«03» սեպտեմբերի 2025 թվականի N 2599-Ա

## 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ՏՐՎԱԾ N71/24 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մելիք Մանուկյանին Գյումրի քաղաքի Սպանդարյան փող. N92 հասցեում բնակելի տան (արտաքին մակ.– 115.2 քառ. մ, երկրորդ կատեգորիա) նոր կառուցման աշխատանքների կատարման համար 2024 թվականի հունիսի 20-ին տրվել է N71/24 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. 2024 թվականի հունիսի 20-ին տրված N71/24 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2025 **թվականի** N2598-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՓՈՂՈՑ N 60 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1855-Ն որոշման՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոց N 60 հասցեի բնակելի շենքի զբաղեցրած 0,0405 (զրո ամբողջ չորս հարյուր հինգ տասհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը տրամադրել շենքի պահպանման և սպասարկման համար, համաձայն կից տրվող հողամասի հատակագծի:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2025-11-03 15:28:06 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2025 **թվականի** N2597-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑ № 56/1 ԱՐՏԱԴՐԱՄԱՍ ՀԱՍՑԵԻ 468.08 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Մ. Խորենացի փողոց № 56/1 հասցեի 468.08 (չորս հարյուր վաթսունութ ամբողջ ութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի, ներառված է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության պահեստարանների գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Մ. Խորենացի փողոց № 56/1 հասցեի 468.08 (չորս հարյուր վաթսունութ ամբողջ ութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արտադրամասա գործառնական նշանակությունից փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության պահեստարանների գործառնական նշանակության:

2025-11-03 14:26:36 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՝ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2025 **թվականի** N 2596-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 2469-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 16-ի «Քաղաքացիներ Անահիտ Եղիազարի և Դավիթ Վաչագանի Ֆարզաղյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ջիվանու փողոց № 72 հասցեի բնակելի տան պահպանման և սպասարկման համար զբաղեցրած 1.93 քառակուսի մետր մակերեսով հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 2469-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 16-ի «Քաղաքացիներ Անահիտ Եղիազարի և Դավիթ Վաչագանի Ֆարզաղյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ջիվանու փողոց № 72 հասցեի բնակելի տան պահպանման և սպասարկման համար զբաղեցրած 1.93 քառակուսի մետր մակերեսով հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 2469-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Վերնագրում «Անահիտ Եղիազարի և Դավիթ Վաչագանի Ֆարզաղյաններին» բառերը փոխարինել «Անահիտ Եղիազարի Ֆարզատյանին և Դավիթ Վաչագանի Ֆարզաղյանին» բառերով.
2) Նախաբանում, որոշման 1-ին և 4-րդ կետերում «Անահիտ Եղիազարի և Դավիթ Վաչագանի Ֆարզաղյաններին» բառերը փոխարինել «Անահիտ Եղիազարի Ֆարզատյանին և Դավիթ Վաչագանի Ֆարզաղյանին» բառերով:

Восстановимая подпись
X
Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2025 թվականի N 2595-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի N 2482-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 16-ի N 126-Ա որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2023 թվականի հոկտեմբերի 09-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի «Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N 131/14 հասցեի 4.0 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 2482-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՓՐԻԹԻ ՈՒԵՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Восстановимая подпись
X
Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2025 **թվականի** N2594-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ № 121/2 ՀԱՍՑԵԻ 36.56 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց № 121/2 հասցեի 36.56 (երեսունվեց ամբողջ հիսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց № 121/2 հասցեի 36.56 (երեսունվեց ամբողջ հիսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

**Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2025 **թվականի** N 2593-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՐԻՆԵ ՌՈԲԵՐՏԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՐՎԱԾ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ն.ԿՈՒԶՆԵՑՈՎԻ ՓՈՂՈՑ № 8 ՀԱՍՑԵՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 71.92 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ն.Կուզնեցովի փողոց № 8 հասցեով բնակելի ֆոնդի տունը նվիրատրվել է քաղաքացի Մարինե Ռոբերտի Մելքոնյանին (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 16-ի № 2130-Ա որոշում):

Քաղաքացի Մարինե Ռոբերտի Մելքոնյանի լիազորված անձ Աղասի Գագիկի Եգանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված բնակելի տան պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 71.92 (յոթանասունմեկ ամբողջ իննսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ օտարվող առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 16-ի № 126-Ա որոշումը և քաղաքացի Աղասի Գագիկի Եգանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի սեպտեմբերի 19-ին № 14236 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Մարինե Ռոբերտի Մելքոնյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել որպես սեփականություն իրեն նվիրատրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ն.Կուզնեցովի փողոց № 8 հասցեով հանրային բնակելի ֆոնդի տան պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 71.92 (յոթանասունմեկ ամբողջ իննսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով Գյումրի համայնքին պատկանող հողամասը որպես սեփականություն՝ համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:
2. Հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 491501 (չորս հարյուր իննսունմեկ հազար հինգ հարյուր մեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Մարինե Ռոբերտի Մելքոնյանի միջոցի հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մարինե Ռոբերտի Մելքոնյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2025 **թվականի** N 2592-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 4574-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 11-ի N 4574-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 01 հոկտեմբերի 2025 թվականի N Կ-01102025-08-0235 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 11-ի <<Քաղաքացիներ Հարություն, Գևորգ, Հռիփսիմե Կարապետյաններին և Սոնիկ Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Ա.Պետրոսյան փողոց N 47/1 հասցեով 104,0 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին>> N 4574-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) նախաբանի վերջին պարբերության <<Նկատի ունենալով, որ պահանջվող հողամասը չի մտնում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այն որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ և ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածներով>> բառերը և թվերը փոխարինել <<Նկատի ունենալով, որ օտարվող հողամասը, որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով, 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ կետով՝>> թվերով և բառերով:

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** 2025-11-03 15:14:03 GMT+4 Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2025 **թվականի** N 2591-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՂԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության լողի պատանիների 2025 թվականի նոյեմբերի 14-16-ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով լողի ֆեդերացիայի 2025 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2025 թվականի նոյեմբերի 3–ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության լողի պատանիների առաջնությանը գործուղման ծախսերի 2025 թվականի նոյեմբերի 14-16-ը Երևան քաղաք գործուղել 8 մարզիկի և 2 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (միայն ճանապարհածախս) 30.000(երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

**2025 թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թ.
_նոյեմբերի_ _03-ի_ N _2591-Ա_ որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության լողի պատանիների առաջնությանը **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| Թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/ մարզիչ | Անձնագիր | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Էլբակյան | Մանե | Մարզիկ | AL0480966 | 2472608165890000 | 3.000 |
| 2. | Սուքիասյան | Մերի | մարզիկ | AX0460135 | 11802059414900 | 3.000 |
| 3. | Սիմոնյան | Մելանյա | մարզիկ | AL0200645 | 16600880359400 | 3.000 |
| 4. | Խաչատրյան | Մարի | մարզիկ | AL0647917 | 1570099461360100 | 3.000 |
| 5. | Վարոսյան | Վլադիմիր | մարզիկ | AX0272859 | 1570099641960100 | 3.000 |
| 6. | Սուվարյան | Արեգ | Մարզիկ | AV0337926 | 19300823076800 | 3.000 |
| 7. | Ղալաչյան | Ալեն | մարզիկ | AX0682440 | 11802062957200 | 3.000 |
| 8. | Խաչատրյան | Վանիկ | մարզիկ | AU0385719 | 163000357448 | 3.000 |
| 9. | Մխիթարյան | Հրանտ | մարզիչ | 007685902 | 15100832945129 | 3.000 |
| 10. | Մելքոնյան | Հովհաննես | մարզիչ | AU0524249 | 1570021106801000 | 3.000 |
| Ընդամենը | | | | | | 30.000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**ՈՐՈՇՈՒՄ**

«03» Նոյեմբերի 2025 **թվականի** N 2590-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ Մ-12 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ 2025-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՏՈՒՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-12 տարեկան պատանիների 2025-2026 թվականների առաջնության 2025 թվականի նոյեմբերի 8–ին Երևան քաղաքում կայանալիք հերթական տուրին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով բասկետբոլի ֆեդերացիայի 2025 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2025 թվականի նոյեմբերի 3–ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-12 տարեկան պատանիների 2025-2026 թվականների առաջնության հերթական տուրին գործուղման ծախսերի 2025 թվականի նոյեմբերի 8–ին Երևան քաղաք գործուղել 12 մարզիկի և 1 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (միայն ճանապարհածախս և սնունդ) 82.700(ութսուներկու հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

**2025 թ. ք.Գյումրի**

Հավելված

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թ.**
**__հոկտեմբերի__ __03__ N __2599-Ա__ որոշման**

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-12 տարեկան պատանիների 2025-2026 թվականների առաջնության հերթական տուրին **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| Թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/ մարզիչ | Անձնագիր | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հովհաննիսյան Հովհաննիսյան | Հովհաննես Արթուր | Մարզիկ ծնող | AN0798142 | 2472606665700000 | 6.300 |
| 2. | Մանուկյան Մանուկյան | Դավիթ Նարա | մարզիկ ծնող | AS0385059 | 2050155708027001 | 6.300 |
| 3. | Գևորգյան Գևորգյան | Վարազդատ Վարդան | մարզիկ ծնող | 002544187 | 2050565228371001 | 6.300 |
| 4. | Նազարեթյան Սարուխանյան | Ռազմիկ Նուշիկ | մարզիկ ծնող | 006964316 | 220540163908000 | 6.300 |
| 5. | Կիրակոսյան | Նարեկ | մարզիկ | AX0496104 | 1630010051869 | 6.300 |
| 6. | Մխիթարյան Մխիթարյան | Գեղամ Մարտին | Մարզիկ ծնող | AP0618924 | 2470052928980010 | 6.300 |
| 7. | Հակոբյան | Մաքս | մարզիկ | AL0294388 | 11802054748500 | 6.300 |
| 8. | Ղուկասյան Ղուկասյան | Տիգրան Ավետիք | մարզիկ ծնող | 011221298 | 2050154937811001 | 6.300 |
| 9. | Հովհաննիսյան Հովհաննիսյան | Սամվել Անդրանիկ | մարզիկ ծնող | AL0208552 | 220061255265000 | 6.300 |
| 10 | Պողոսյան Պողոսյան | Ալեն Անուշ | մարզիկ ծնող | 011117926 | 11802044130901 | 6.300 |
| 11. | Մելքոնյան Համբարյան | Նարեկ Մելինե | մարզիկ ծնող | AR0418716 | 2623420512041001 | 6.300 |
| 12. | Ոսկանյան Սահրադյան | Արտակ Լիլիթ | մարզիկ ծնող | AS0588906 | 11802065877900 | 6.300 |
| 13. | Հարությունյան | Արտակ | Մարզիչ | AS0351292 | 1510037597440200 | 7.100 |
| Ընդամենը | | | | | | 82.700 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«_03_»_նոյեմբերի_ 2025 **թվականի** N_2589_-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ Մ-16 ՏԱՐԵԿԱՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ 2025-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՏՈՒՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-16 տարեկան աղջիկների 2025-2026 թվականների առաջնության 2025 թվականի նոյեմբերի 8-ին Երևան քաղաքում կայանալիք հերթական տուրին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով բասկետբոլի ֆեդերացիայի 2025 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2025 թվականի նոյեմբերի 3-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-16 տարեկան աղջիկների 2025-2026 թվականների առաջնության հերթական տուրին գործուղման ծախսերի 2025 թվականի նոյեմբերի 8-ին Երևան քաղաք գործուղել 10 մարզիկի և 1 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (միայն ճանապարհածախս և սնունդ) 70.100(յոթանասուն հազար մեկ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

**2025 թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թ.
հոկտեմբերի 03-ի N 2589 որոշման

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-16 տարեկան աղջիկների 2025-2026 թվականների առաջնության հերթական տուրին **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| Թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/ մարզիչ | Անձնագիր | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Եղիգարյան | Անի | մարզիկ | AV0500127 | 2478902214240008 | 6.300 |
| 2. | Հարությունյան | Հասմիկ | մարզիկ | AV0534020 | 1570099643520100 | 6.300 |
| 3. | Ֆլիկյան | Գոհար | մարզիկ | AL0319141 | 1510061373853700 | 6.300 |
| 4. | Առաքելյան | Մարիամ | մարզիկ | AR0364844 | 163002755672 | 6.300 |
| 5. | Մաթոսօղլյան | Ռուզաննա | մարզիկ | AX0420122 | 1510029798227900 | 6.300 |
| 6. | Թովմասյան | Լուսինե | մարզիկ | AT0307851 | 220064062999000 | 6.300 |
| 7. | Եղիգարյան | Մերի | մարզիկ | AV0500128 | 2478902200950006 | 6.300 |
| 8. | Գրիգորյան | Գայանե | մարզիկ | AL0431742 | 1510006815038100 | 6.300 |
| 9. | Պապոյան | Թամար | մարզիկ | AL0258125 | 2623481608191001 | 6.300 |
| 10 | Մկրտչյան | Մանե | մարզիկ | AX0418392 | 220540841099000 | 6.300 |
| 11. | Գալոյան | Մելինե | մարզիչ | AR0215784 | 15100145885158 | 7.100 |
| **Ընդամենը** | | | | | | **70.100** |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» նոյեմբերի 2025 **թվականի** N 2588-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 08-Ի N 2065-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 08-ի N 2065-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-14102025-08-0013 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 08-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց N 3/5 հասցեի 285.0 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին>> N 2065-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը ՝
   1) նախաբանում, որոշման 1-ին կետում <<այլ հողեր>> բառերը փոխարինել <<հասարակական>> բառով:

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

2025-11-03 09:56:34 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ
## ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԽԱՉԱՏՈՒՐ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«03» «նոյեմբերի» 2025 թվական N 2587 – Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2025 թվականի հոկտեմբերի 31-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Խաչատուր Համազասպի Մկրտչյանի (ՀԾՀ՝1801760497, հասցե՝ ք.Գյումրի, տնակ 158/055Ա) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Խաչատուր Համազասպի Մկրտչյանին պատկանող AUDI A4 1.6 մակնիշի 35XU104 պետահամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է գույքահարկի 2020 թվականների չվճարված հարկից (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի տեղական հարկերի և վճարների միասնական համակարգի կողմից տրամադրված տեղեկանքը N 196813288469165021):

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով վճարման ենթակա գումարը 2025 թվականի հոկտեմբերի 07-ի դրությամբ տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի համաձայն հարկային պարտավորությունները կազմել են՝ 27.088 (քսանյոթ հազար ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 20.966 (քսան հազար ինը հարյուր վաթսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 6.122 (վեց հազար մեկ հարյուր քսաներկու) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած և նույն պահին գործող խմբագրությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում՝

9) «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-491-Ն օրենքը: Նույն պահին գործող խմբագրությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 444-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգիրքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ Օրենսգրքի՝ սույն հոդվածի 2-13-րդ մասերով սահմանված դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում նույն մասերով սահմանված ժամկետներում:

2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքի 112-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասում՝ 9-րդ և 10-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Համաձայն նույն օրենքի 111-րդ մասի 1-ին պարբերության 2-րդ կետի՝ Օրենսգրքի 444-րդ հոդվածում՝ 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Օրենսգրքի 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) և 12-րդ բաժիններն ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ից: ...»

Նույն օրենքի 119-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 111-րդ հոդվածի 2-րդ կետը, 112-րդ հոդվածի 3-րդ կետը ուղղ. և 113-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից և գործում են մինչև 2019 թվականի հունվարի 1-ը:

2019 թվականի հունիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-68-Ն օրենքի

68-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Նույն օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 444-րդ հոդվածի 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Օրենսգրքի 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) և 12-րդ բաժիններն ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ անշարժ գույքի հարկի հաշվարկման նպատակով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից՝ ըստ անշարժ գույքի սեփականատերերի՝ Օրենսգրքի 227-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի (ըստ հողամասերի և (կամ) դրանց համապատասխան բարելավումների) ու դրանց համապատասխան կադաստրային արժեքների ու հաշվարկային զուտ եկամուտների վերաբերյալ տեղեկությունները հարկ վճարողներին հաշվառող մարմիններ ներկայացնելուն վերաբերող դրույթն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:»:

Համաձայն նույն օրենքի 71-րդ հոդվածի վերջին պարբերության ՝ սույն օրենքի 68-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում է 2019 թվականի հունվարի 1-ից ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը:

Նույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ սույն օրենքի 1-ին հոդվածը, 6-րդ հոդվածի 2-րդ կետը, 9-րդ և 10-րդ հոդվածները, 11-րդ հոդվածի 3-րդ կետը, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, 15-րդ և 17-րդ հոդվածները, 18-րդ հոդվածի 1-ին կետը, 24-րդ, 27-րդ, 29-րդ և 30-րդ հոդվածները, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերը, 38-րդ, 48-56-րդ, 60-րդ, 63-67-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վերոգրյալ իրավանորմերից հետևում է, որ «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-491-Ն օրենքը գործել է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը:

Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

Հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

«Գույքահարկի մասին» օրենքի (այսուհետ Օրենք) 2-րդ հոդվածի համաձայն՝ Գույքահարկը սեփականության իրավունքով սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկ վճարող են համարվում Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույքը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների:

Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում. 2. Փոխադրամիջոցները:

Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա սույն օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը: Ընդ որում՝ 5) փոխադրամիջոցների հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկի գծով պարտավորությունն առաջանում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Գույքահարկի գծով պարտավորությունը դադարում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ֆիզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին:

Նույն հոդվածի 2-րդ մասի 2–րդ կետի համաձայն՝ գույքահարկ վճարող ֆիզիկական անձինք գույքահարկը հաշվարկում են ինքնուրույն և տարեկան հաշվարկները կարող են մինչև հաշվետու տարվա հոկտեմբերի 1-ը ներառյալ ներկայացնել՝ 2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար՝ հարկ վճարողի հաշվառման վայրի հաշվառող մարմին: Հաշվառման վայրի բացակայության դեպքում հաշվարկները ներկայացվում են հարկ վճարողի հիմնական բնակության վայրի հաշվառող մարմին: Եթե հաշվառման կամ հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա հաշվարկները ներկայացվում են փոխադրամիջոցի գրանցման վայրի հաշվառող մարմին:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ կետի, 401–րդ հոդվածի 1-ին կետի, «գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի, 3-րդ հոդվածի 1-ին մասի, 4-րդ հոդվածի 2–րդ մասի, 5-րդ հոդվածի 5-րդ մասի, 8-րդ հոդվածի 1–ին մասի, 10–րդ հոդվածի 1–ին մասի, 13-րդ հոդվածի 2-րդ և 3–րդ մասերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդված 4-րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 55-րդ, 56-րդ հոդվածների, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88-րդ հոդվածի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Քաղաքացի՝ Խաչատուր Համազասպի Մկրտչյանից հօգուտ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 27.088 (քսանյոթ հազար ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 20.966 (քսան հազար ինը հարյուր վաթսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 6.122 (վեց հազար մեկ հարյուր քսաներկու) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Խաչատուր Համազասպի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Խաչատուր Համազասպի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2025-11-03 16:06:18 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թվական, ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ
## ՔԱՂԱՔԱՑԻ ԽԱՉԱՏՈՒՐ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«03»«նոյեմբերի» 2025 թվական N 2586 – Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2025 թվականի հոկտեմբերի 31-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Խաչատուր Համազասպի Մկրտչյանի (ՀԾՀ1801760497, հասցե՝ ք.Գյումրի, տնակ 158/055Ա) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Խաչատուր Համազասպի Մկրտչյանին պատկանող AUDI A4 1.6 մակնիշի 35XU104 պետահամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է գույքահարկի 2021-2024 թվականների չվճարված հարկից (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի տեղական հարկերի և վճարների միասնական համակարգ կողմից տրամադրված տեղեկանքը):

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով վճարման ենթակա գումարը 2025 թվականի հոկտեմբերի 07-ի դրությամբ տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի համաձայն հարկային պարտավորությունները կազմել են՝ 108.648 (մեկ հարյուր ութ հազար վեց հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 84.000 (ութսունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 24.648 (քսանչորս հազար վեց հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

Օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի համաձայն՝ իրականացնում են հարկ վճարողների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,

Իրականացնում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ հարկային պարտավորությունը փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ են համարվում հետևյալ փոխադրամիջոցները.

Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը.

Օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում հարկման օբյեկտ համարվող

փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենսգրքի 246 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունն առաջանում է փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման (հարկային պարտավորությունների առաջացման) համար հիմք են համարվում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

Օրենսգրքի 247 հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Օրենսգրքի 251 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված գույքահարկի պարտավորության գումարները) իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն մասում նշված գումարները վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն հոդվածում նշված գումարները վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 239-րդ հոդվածի 1-ին մասի, 240-րդ հոդվածի 1-ին մասի, 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի, 242-րդ հոդվածի 1-ին մասի, 243-րդ հոդվածի 1-ին մասի, 246-րդ հոդվածի 1-ին մասի, 247-րդ հոդվածի, 251-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդված 1–ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 55-րդ, 56-րդ հոդվածների, 58-րդ հոդվածի 1-

ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88-րդ հոդվածի դրույթներով՝

**Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ**

1. Քաղաքացի՝ Խաչատուր Համազասպի Մկրտչյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 108.648 (մեկ հարյուր ութ հազար վեց հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 84.000 (ութսունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 24.648 (քսանչորս հազար վեց հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Խաչատուր Համազասպի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Խաչատուր Համազասպի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ**

**ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2025 թվական, ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**ՈՐՈՇՈՒՄ**

«31» հոկտեմբերի 2025 թվականի N 2585 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԼԻԱՆԱ ԲՈՐԻՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՓՈՂՈՑ 6 ՇԵՆՔ 27 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ԺՈՐԺ ԱՐՏԱԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2025 թվականի հոկտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Լիանա Բորիսի Գևորգյանը (անձնագիր՝ AL0404279, տրված՝ 24.08.2023 թվականին 064-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 26 մարտի 2010 թվականին ծնված Ժորժ Արտակի Խաչատրյանի (ծննդյան վկայական՝ III-ԱԳ №648050) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոց 6 շենք 27 բնակարանի մասնաբաժինը:

Երեխայի հայրը՝ Արտակ Աշոտի Խաչատրյանը մահացել է 2011 թվականի հունվարի 29-ին (հիմք՝ մահվան վկայական II-СИ №718343):

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Ժորժ Արտակի Խաչատրյանը (հիմք՝ 11 մայիսի 2022 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 11052022-08-0037):

Նիստին ներկա գտնվող անչափահասի մայրը՝ Լիանա Բորիսի Գևորգյանը հայտնեց, որ իր անչափահաս երեխան՝ Ժորժ Արտակի Խաչատրյանը հանդիսանում է նվիրառու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց, շենք 77/յոթանասունյոթ/, թիվ 26/քսանվեց/ հասցեում գտնվող բնակարանից 1/4-րդ բաժնեմասի (հիմք՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ 1/4-րդ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, տրված՝ 28/10/2025 թվականին Հայաստանի Հանրապետության «ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ» նոտարական տարածքի նոտար՝ Ռոբերտ Տոլիկի Մուկուչյանի կողմից գրանցված է գրանցամատյանում թիվ 5621-ով):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Ժորժ Արտակի Խաչատրյանը տվել է համաձայնություն իր մասնաբաժինը վաճառելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Լիանա Բորիսի Գևորգյանի 2025 թվականի հոկտեմբերի 21-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 16235 թվագրությամբ) և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի

համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.**Համաձայնություն տալ Լիանա Բորիսի Գևորգյանին (անձնագիր՝ AL0404279)՝ վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 26 մարտի 2010 թվականին ծնված Ժորժ Արտակի Խաչատրյանի (ծննդյան վկայական՝ III-ԱԳ №648050) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոց 6 շենք 27 բնակարանի մասնաբաժինը, նոր բնակարան ձեռք բերելու կապակցությամբ:

**2.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիանա Բորիսի Գևորգյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ**

2025-10-31 14:19:21 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** mID **ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025 թվական քաղաք Գյումրի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2584-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 659-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 01-Ի N 1909-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 01-ի N 1909-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին Կ-06102025-08-0052 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 36-րդ հոդվածի 1-ն մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 01-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հ.Սարգսյան փողոցի հարևանությամբ գտնվող 74,21 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա 161,74 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Մերուժան Լյուդվիգի Մաթևոսյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 1909-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) վերնագրում, որոշման 1-ին կետում <<161,74(մեկ հարյուր վաթսունմեկ ամբողջ յոթանասունչորս հարյուրերրորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<97,14(իննսունյոթ ամբողջ տասնչորս հարյուրերրորդական)>> թվով և բառերով:

2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 01-ի N 1909-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 659-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

2025-10-31 17:33:23 GMT+4

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2583-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 645-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի N 3050-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 04-ի N 3050-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 15 օգոստոսի 2025 թվականի N ԱՏ-15082025-08-0463 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 04-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հ.Սարգսյան փողոցի հարևանությամբ գտնվող 101,58 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա 192,82 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Վարուժան Լյուդվիգի Մաթևոսյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 3050-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) վերնագրում, որոշման 1-ին կետում <<192,82(մեկ հարյուր իննսուներկու ամբողջ ութսուներկու հարյուրերրորդական)>> թիվն ու բառերը փոխարինել <<122,21(մեկ հարյուր քսաներկու ամբողջ քսանմեկ հարյուրերրորդական)>> թվով և բառերով:
2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 04-ի N 3050-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 645-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

2025-10-31 17:28:47 GMT+4
Հավաստված է ԷՍՆԳ-ի կողմից

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2582-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԹՈՒՐԱՆ ՍՈՒՐԵՆԻ ՀԼՂԱԹՅԱՆԻՆ (1/2 ՄԱՍ) ԵՎ ԳՈՌ ԱՐՄԵՆԱԿԻ ՀԼՂԱԹՅԱՆԻՆ (1/2 ՄԱՍ) ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԾՈՒԼՈՒԿԻՁԵ ՓՈՂՈՑ № 1 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 80.19 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Թուրան Սուրենի Հլղաթյանին (1/2 մաս) և Գոռ Արմենակի Հլղաթյանին (1/2 մաս) պատկանող Գյումրի քաղաքի Ծուլուկիձե № 1 հասցեի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 80.19 (ութսուն ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություն:

Քաղաքացի Թուրան Հլղաթյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինության նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի, հիմք ընդունելով քաղաքացի Թուրան Հլղաթյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հուլիսի 14-ին № 9724 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Թուրան Սուրենի Հլղաթյանին (1/2 մաս) և Գոռ Արմենակի Հլղաթյանին (1/2 մաս) պատկանող Գյումրի քաղաքի Ծուլուկիձե № 1 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 80.19 (ութսուն ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը ճանաչել օրինական:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Թուրան Հլղաթյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025.10.30 09:34:27 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՀՐԱՉԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«31» «հոկտեմբերի» 2025 թվական N 2581 – Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2025 թվականի հոկտեմբերի 30-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Անդրանիկ Հրաչիկի Խաչատրյանի (ՀԾՀ3007780020, հասցե՝ ք.Գյումրի, Ա. Մյասնիկյան փողոց, տուն 167) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Անդրանիկ Հրաչիկի Խաչատրյանին պատկանող LIXIANG L7 MAX 1.5 PLUG-IN HYBRID մակնիշի 77ED001 պետահամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է գույքահարկի 2024 թվականների չվճարված հարկից (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի տեղական հարկերի և վճարների միասնական համակարգ կողմից տրամադրված տեղեկանքը):

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով վճարման ենթակա գումարը 2025 թվականի հոկտեմբերի 08-ի դրությամբ տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի համաձայն հարկային պարտավորությունները կազմել են՝ 159.982 (մեկ հարյուր հիսունինը հազար ինը հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք 130.875 (մեկ հարյուր երեսուն հազար ութ հարյուր յոթանասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 29.107 (քսանինը հազար մեկ հարյուր յոթ) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

Օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի համաձայն՝ իրականացնում են հարկ վճարողների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,

Իրականացնում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ հարկային պարտավորությունը փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ են համարվում հետևյալ փոխադրամիջոցները.

Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը.

Օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենսգրքի 246 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունն առաջանում է փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման (հարկային պարտավորությունների առաջացման) համար հիմք են համարվում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

Օրենսգրքի 247 հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Օրենսգրքի 251 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված գույքահարկի պարտավորության գումարները) իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն մասում նշված գումարները վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն հոդվածում նշված գումարները վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 239-րդ հոդվածի 1-ին մասի, 240-րդ հոդվածի 1-ին մասի, 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի, 242-րդ հոդվածի 1-ին մասի, 243-րդ հոդվածի 1-ին մասի, 246-րդ հոդվածի 1-ին մասի, 247-րդ հոդվածի, 251-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդված 1–ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 55-րդ, 56-րդ հոդվածների, 58-րդ հոդվածի 1-

ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88-րդ հոդվածի դրույթներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի՝ Անդրանիկ Հրաչիկի Խաչատրյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 159.982 (մեկ հարյուր հիսունինը հազար ինը հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 130.875 (մեկ հարյուր երեսուն հազար ութ հարյուր յոթանասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 29.107 (քսանինը հազար մեկ հարյուր յոթ) Հայաստանի Հայաստանի Հանրապետության դրամ գումար:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Անդրանիկ Հրաչիկի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Անդրանիկ Հրաչիկի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ**

**ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2025 թվական, ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2580-Ա

**<<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Էյթիէլ սերվիսիս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի հոկտեմբերի 01-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հոկտեմբերի 08-ին 15542-2025 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.**

1. Թույլատրել <<Էյթիէլ սերվիսիս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի վարչական տարածքում տեղադրված առկա վահանակների վրա տեղադրել (տեղաբաշխել) արտաքին գովազդի պաստառներ ընդհանուր 162 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Էյթիէլ սերվիսիս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Աշոտ Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

**Հավելված**

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի պաշտոնակատար
2025 թ. հոկտեմբերի 31-ի
N 2580-Ն որոշման

**ՑՈՒՑԱԿ**
**<<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ**

| Հ/Հ | ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ | Քանակ | (քառ. մ) |
|---|---|---|---|
| 1 | Խաղաղության օղակ – Հաղթանակի խաչմերուկ | 1 | 18 |
| 2 | Շիրակացի փողոց | 2 | 36 |
| 3 | Ալ. Մանուկյան 2/19 | 2 | 36 |
| 4 | Խորենացի փ. , Սախարովի հրապարակ | 2 | 36 |
| 5 | Տերյան – Մյասնիկյան խաչմերուկ | 2 | 36 |
| | **Ընդամենը** | **9** | **162** |